

41126

ԱՍՏԻԱԾԱՇՈՒՆԶՆ ՀԱՅՈՑ

Նրա թարգմանութեան 1500-ամեայ յօրեկանի առթիւ
գրեց՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ *Կ*

207

ՆՈՐ—ՋՈՒԴԱ

Տպարան Ս. Ամենափրկչեան Վանքի
1935

891.99
5-38

Եւ զարբնոցի սալլի նման նա կրում է մուրճի հարւած,
Բայց սալը չէ, որ մաշուած է, այլ մուրճն է՝ նրան զարկւած.
Շատեր եկան անյետ անցան, ազգեր եկան անհետք կորան,
Նրան գիպան փշրւեցին, բայց նա կապրի մինչ յաւիտեան:

Սակայն ինչքան ծաղր ու ծանակ, մուր նախատինք ուղղեն նրան,
Նա կը մնայ աստուածային անչեղ խօսքի լուսոյ խորան,
Եւ ինչքան էլ Վօլտեր, Դարւին նրա արտում որոմ ցանեն,
Նա կը մնայ, կը զօրանայ, յաւերժ կապրի—նրանք կանցնեն:

Ե՞րբ էք տեսել նման մի գիրք—հեզինակը՝ Աստուած Ինքը,
Նիւթը՝ Աստուած, մարդ արարած, փրկութիւնը, մահն ու կեանքը,
Զարմանահրաշ մայր գրքերի, ներչնչարան գրողների,
Մշտապայծառ աստղ երկնային, փարոս լուսոյ անյոյսների:

Կեանքի ծովի յորձանքներում հոյ եղել է նաւաբեկւած,
Բարեկամից, հարազատից իսպառ լքւած ու մոռացւած.
Ոյ քամել է թունոտ կրքի լի բաժակը մինչև մրուր,
Նա ցոյց կը տայ սփոփանքի ուղիղ ճամբան—Դէպի Մսուր:

Եթէ դու էլ հասկացել ես, որ փշոտ է կեանքի ճամբան,
Երջանկութիւն, փառք ու պատիւ-վաղանցուկ է և ամէն բան,
Եւ թէ դու էլ որոնում ես ճշմարտութեան վճիտ ակը,
Գիմիր նրան, այն Մեծ Գրքին, իր տեսակում հէնց միակը:

Դիմիր նրան, մի ամաչիր, լի հաւատքով գրկիր նրան,
Եւ կը տեսնես, որ կարճ պահում քեզ կը դառնայ սփոփարան,
Մի ամաչիր սոփեստներից, գատարկաբան զգիտուններից,
Որ հեզնական կարծիքներով քեզ կը շեղեն սուրբ մտքերից:

Զինաթափւիր դու աշխարհիկ ամէն կարգի թող զէնքերից,
Եւ մտեցիր ակնածութեամբ. նա սարսող չէ սին խօսքերից,
Բախիր գհուր՝ նա կը բանայ, հարցեր ուղղիր, նիւթեր ընտրիր,
Համբերութեամբ երկար քննիր. խոր մտածիր, իմաստ փնտրիր:

Իսկ երբ անցնի քո աչքերից մութ խաւարը տգիտութեան,
Սյն ժամանակ դու կը տեսնես փոքրութիւնը սոփեստութեան.
Դու կըմբռնես, թէ ինչ հրաշքով աստուածառաք Բամբերն այն
Պատասխանեց քո հարցերին—տեսիլներից արաւ ընդ լայն:

Ահա քեզ մօտ դու կըտեսնես Արարչագործ Հայր Եհովան,
Մերթ Սինայի լեռան վրայ պատգամելիս տասնաբանեան,
Մերթ նոյնանուն անապատում առաջընթաց զերթ Հրեզէն Սիւն,
Որ տանում է Իսրայէլին դէպի խողաղ, ազատ անկիւն:

Սպա մէկ-մէկ քո առջևից կը գան, կանցնեն մարգարէներ,
Տիրոջ կամքը յայտնաբերող ժամանակի լոյս փարոսներ,
Որոնց հողին լուսեբանգւած երկնաճաճանչ տեսիլներով,
Միաբերան աւետեցին—Փրկչի Գալուստ կանխասելով:

Իսկ երբ քայլեց այս աշխարհում Հինաուրցը—Մարդու Որդին,
Լուսաբանեց ու քարոզեց իր ինքնութիւնը—Աստուածորդին,
Եւ դառնալով անցեալների խորախորհուրդ նշաններին՝
Մատնանչեց Պղինձ Սձը՝ խորհրդանիշ իր սուրբ Խաչին:

Անցեալների, գալիքների խոր դադանիքը թափանցելով,
Եւ զրքերի վաւերական ներչնչումն հաստատելով
Պատէք տաւ իրար սիրել, զրքեր քննել, ճիշտը փնտրել,
Ժամանակի նշաններին զգուշութեամբ հետապնդել:

Քանզի երբ գայ նախաձայնած մեծ ժամանակ վախճանական,
Ու մօտենայ անեղ ժամը երկրորդ անգամ իր Գալստեան,
Պատմութիւնը պիտի խօսի, զիտութիւնը կըշատանայ,
Որ սրանցով կրկին անգամ Աստուծոյ խօսքը վաւերանայ:

Համակ գրքում քեզ կըպարզւի կենտրոնական դէմքը Փրկչի,
Որի անհուն սիրոյ առաջ գոռոզ ետըդ պիտի փըլչի.
Այնուհետև հեզահոգի վարդապետին իբր աշակերտ,
Դու կըդառնաս կեանքովդ ողջ հոգու տաճար անձեռակերտ:

Ո՛րքան տկար ու անզօր է մարդու լեզուն, գրիչ, միջոց,
 Վեր հանելու ջո փառք չբեզ ճվ դու Մայր Գիրք համայն դրոց,
 Ո՛րքան պայծառ, համատարած լուսաճանձնչ ցոլքերը քո,
 Մուխ աշխարհին լուսաւորող աստեղագեծ երկնի ներքոյ:

Արդ, երբ այսօր բազմաշարչար հայ ժողովուրդ կանդ է առել
 ևւ հայեացքը խոր սլատմութեան մեծ դէպքերի շուրջը յառել,
 Քեզ է տեսնում, ճվ մեծ Սուրբ Գիրք, ջան լուսաւոր մշակութեան,
 Խնամակալ մեր քրիստոնեայ նորածնունդ պերճ մանկութեան:

Քեզ է տեսնում տասն և հինգ դար իբրև կանթեղ Լուսաւորչի
 կախած հնոց մութ երկնքում, — արտոճաւ ազգիս կրած խաչի,
 Որ յանձն առաւ սիրով կրել մինչև օրը Սրչարչայի,
 Երբ կատարել իք հինաւուրց տեսիլների փառքը յայսի:

Քո էջերում պատկերացած հոգիների Մեծ Հովիւր,
 Յափշտակեց, բազմապատկեց հաւատաւոր հայի թիւը,
 Ուստի և սա սրտհանջ զգացքեզ ունենայ իք խն լեզուով,
 Որ խորն դգաք, հաւատք պահէր, ոգևորէր նրա սիրով:

Եւ ներշնչած այդ մեծ հոգով՝ Մեարոյ Մաշտոց, Մահակ Պարթև,
 Հայ երկնքի երկու աստղեր, գէպքեզ թռան խիտ սրաթև,
 Որ ճանաչեն Ձիմաստութիւն և գիրատ, բանը հանճարոյ,
 Իմացնեն հայոց ազգին, որ սրանցով ծնւեն նորոյ:

Մէկէն ի մէկ, տհա, ընից և դարաւոր արջամուղջից
 Վերածնեց նոր Հայաստան խաւարակուռ մոքի միջից,
 Քանզի կեանքի խօսքը վսեմ արձագանգեց հայ գրերով,
 Իմացութեան ծաղկափթիթ անդաստանը լցեց բոյրով:

Մեարոյ, Սահակ, Կորիւն, Եզնիկ — մշակները բուքաստանի,
 Լուսապսակ ճակատներով թարգմանիչներ Լուսոյ Բանի,
 Ծիգ ու ջանքով, մեծ եռանդով, երկունք-ցատով աշխարհ ամին
 Աքեզ Վշխոյ թարգմանութեանց, որ և ազգին պարծանք բերին:

Արձագանդեց մեծ աւետիս ու խնդութիւն հայ աշխարհին,
 Աստուածաշունչ աւուն տրեց հայ դրքերի ուսովիւրային,
 Եւ ճոկեդարս յորջորջումով կնքեց դարը մինչև այսօր,
 Որի նման դեռ չի եկել ուրիշ մի դար ճոխ, համարօ:

Այն օրից յետ հայ վանքերը դարձան խօսքիդ վկայարան,
 Մագաղաթեայ հատորներիդ աւանդաւուն, դրադարան,
 Ուր ճգնակեաց վարդապետներ նւիրեցին դրչագրութեան,
 Բազմացրին, ճոխացրին թիւն ազգիս հարստութեան:

Այնուհետև շեղինակիդ հոգու շնչով հրովաւուած,
 Հանդէս եկան Նարեկացին, Ծնորհալին հոգեզմայլւած,
 Որ հիւսեցին ճողերգութիւնս, ճթիս ևս Որդիս, ճթան հաւատոյ,
 Հոգեպարար աղօթքներով ճշաւաչանաց խօսք ընդ Աստոյ:

Պարեր եկան, դարեր անցան՝ ազգը հայոց միշտ հուշուած,
 Անպատմիլի տւս յոճանքով, հուր ու սրի միջով անցած,
 Կառչած մնաց պաշտամունքիդ և անունիդ միշտ օրհնաբան,
 Խաչակրիդ յար և նման իք հաւատքին՝ եղաւ պաշտպան:

Հայրենագուրի, տարադուած, հալածական իք օրերում,
 Երբ աշխարհի շորս կոզմերում ապատանի յարկ Լր փնտրում,
 Չը մուացաւ իք հետ տունել ջո հատարը սփոփական,
 Եւ վեր դասել իք դանձերից՝ գրոց լեզուդ նւիրական:

Իսկ հեռաւոր արեւելքում, երբ նա դտու խաղաղ անդօրը,
 Մեծակաւոց տաճարներով որ ամբէր սիրար տոչոր,
 Եւ վերամբարձ գմբէթներով բարձրացրեց խաչանշան,
 Որ քարոզէր ի սես այոց Կողգոթայի այն սուրբ Վկան:

Աստուածային Պատրամախօս, անսպաւ է դովքդ անուշ,
 Պատմութիւնդ սրտագաւ, հիացող տկար, անուժ,
 Մագաղաթեայ ջո հատորներ, հիմնաքարեր հայ դպրութեան,
 Ոգի աւին, սէր վառեցին մեր վաղեմի ողջ հայութեան:

Տասնհինգ դար դու եղիլ ես հայ դպրոցի դաստիարակ,
 Հալածական մեր օրերին՝ հաւատարիմ միակ պահակ,
 Քո միջոցով վերստեղծեց ու պահպանեց լեզուն հայոց,
 Մեր ազգութեան միակ խարխալ, օվկիանոսում խոր ակիլոս:

Սակայն այսօր, երբ հասել է վսեմաշուք քո յորելեան,
 Տասնհինգդարեան փառապանծ օր ամենայաղթ սիրելութեան,
 Չկայ մեր մէջ, աւաղ չկայ, մեր պապերի անուշ ողին,
 Որ թունդ առնէ մեր սրտերը՝ օրհներգելու քեզ սրտադին:

Արժանի ես, միշտ արժանի փառք ու պատւի և դոխութեան,
 Դու եղել ես մեզ հարազատ, մայր կաթողին ճշմարտութեան,
 Այն ժամանակ, երբ ազգերը մեր օրերի քեզ փառաբան,
 Յաճում էին դեռ անտառում վայրենաբար, թափառական:

Իսկ երբ այսօր թունդ է առել ողջ տշխարհը քո խօսքերով,
 Ու պատգամդ սլանում է բազմաբարբառ լեզուներով,
 Երբ սաւառնակ ու հեռաձայն լուր են տանում մերկ խափշիկին,
 Քանիդ մասին, մեզ տիրել է անհաւատի սնանկ ողին:

Մեզ տիրում է հոգեորի ու հաւատքի սնանկութիւն,
 Բարոյական արժէքների մի կատարեալ ամօյութիւն,
 Եւ կորցրած մեր պապերի նկարողիք ու կուռ հաւատ,
 Մեր բարքերով նրանց անւան այժմ բերում ենք միայն արայու:

Ախ, այս ազգը, իմ հէզ ազգը, ինչո՞ւ այսպէս խելակորոյս,
 Մին մտքերով ոգեւորւած ընթանում է անդիկ, անյոյս,
 Կարծես զիսմամբ ուզենալով խորտակելու նկարագիրը
 Ու կառուցւածք նախնիքների՝ այնքան բարուն լի համակիր:

Նմանելու սին մարմաջով նա արբեցած, ոգևորւած,
 Երիտասարդ ու պատանի պար ու խնդում լոկ իղձ արած,
 Ոտնահարում, ծանակում են կրօն, հաւատք, ողջմիտ խօսքեր,
 Եւ մանաւանդ ամօթ նրան ով կարդում է քո սուրբ գրքեր:

Մենք վարակւած Արեւմուտքից առատ հոտող ամէն մտքից,
 Ու կուրացած աղղոյնադաւ, հաւատաբաց ստոր կրքից,
 Վաղուց է ինչ մեր դպրոցից վտարել ենք քո անունը,
 Քանզի հին ես, յետադէմս ես, քեզ չէ սիրում հայ Վիտունը:

Իսկ շատերը գիտութիւնը մտեգնաբար կուռք դարձրած,
 Որից յաճախ իրենք նոյնիսկ անդէտ են ու ճաշակ չառած,
 Ծունկ են չորում նրա առաջ գերթ գիտուններ ամէն կողմից,
 Մինչ ճշմարիտ գիտութիւնից անտեսեալ են միանգամից:

Մինչդեռ այսպէս անարդանքի ու լուտանքի տարափի տակ
 Լ'անում է խօսքիդ պատգամ և յայտնութիւն իբրև փայլակ,
 Հնախոյրը բան ու բրշով երկրի խորքից դուրս է հանում
 Իրեր բարում, որ քո մասին խորհուրդներ են պարզաբանում:

Յայտնարկրւած այդ խորհուրդներ, իբրև խօսուն ուժեղ փաստեր,
 Յուսադրում, ափսոսում են քեզ փտաճաղ ակար սրտեր,
 Քանզի նրանք հաստատում են Փրկչի սասած այն սուրբ խօսքեր,
 Որ թէ մարդիկ անխօս կենան, կաղաղակեն երկրի քարեր:

Կարգացել էք հայոց դիրքը, այն բաց գիրքը— Աստուածաշունչ,
 Նկատել էք Գողգոթայի խաչակրին հէզ, կիսաշունչ
 Բարձրանալիս գողգոթն ի վեր փչկասակ արիւնստւած,
 Նա ալատկերն է մեր հայ ազգի իր ողջ կեանքում բոսոր ներկւած:

Որքան լքւած, արհամարհւած թէկուզ լինիս նոր սերունդից,
 Դարձեալ դնւ ես սիրւած գիրքը, միշտ փայփայլած մեր հայրերից,
 Քանզի յաւէր քո էջերում թարմ պահում ես հայ պատկերը,
 Որ միշտ տեսնի այն ճեղ ուղին, որ ընտրել են իր պապերը:

Իցիւ նայէր, համեմատէր քաղաքակիրթ գուր Եւրոպան
 Արեւելի մեր Չահակիր փոքրիկ ազգին հնադարեան,
 Համեմատէր ու գէթ տեսնէր նրա գործը այն մութ դարում,
 Իսկ իրենը — մարդ էակին խողխողիչ զէնք այս կիրթ դարում:

Ահա այսպէս մեզի, հիւանդոտ այս պատկերով քեզ մօտ եկած,
Հակադիրը մեր հայրերի — քո ծնունդին առաջարկած,
Հայոց ազգի «խաւարամիտ» ու «յիտադէմ» այս սերունդը
Աղերսում է, որ դու ցանկաւ նրա սրտում Բանի հունդը:

Հազար և հինգ հարիւր ամի այս մեծ տօնիդ քեզ մօտ գալով,
Չայն հեծութեան հառաչանայ մեր սրտերում քաջ զբալովի,
Թող որ ուխտենք — նոր դաշն կնքել՝ ներում խնդրել միմեանց ներքի,
Ազգամիջեան դաւ ու պայքար վերացնել, սիրով սալրել:

Թող որ ցոյց տանք ողջ աշխարհին թէ ազգովին դեռ չենք մեռած,
Մի անգամ էլ համախմբւած, իմացնենք նոր այժ առած,
Որ դարաւոր մենք քրիստոսնեայ՝ ունենք քիչ-չատ լիմաստութիւն
Հասկանալու խօսքիդ իմաստ — Աստուած սէր է, խաղաղութիւն:

Կարծեմ դու էլ այդպէս կուզես, որ քեզ տօնող ժողովուրդը,
Խորը զգայ իր մէջ տիրող խաղաղութեան սիրոյ ցուրտը,
Եւ ջերմացած քո հաւատքի եռանդաշունչ վառ կրակով,
Քեզ մօտենայ զարգարելու սուրբ ճակատըդ թարմ պօսկով:

Կար ժամանակ ասում էինք — Հայոց երկիրն է՛ջ Միածին,
Արդ ամօթով դիտակցում ենք Հայոց երկրից — ե՛լ Միածին,
Սակայն հեռու լուսալքում, յաւերժ սալրի հայ ժողովուրդ,
Աստծոյ խօսքի քաղցը սրտում, միշտ նրանից առնի յագուրդ:

Նոր — Ջուղա,

17-24 Մարտի, 1935 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0363681

1 xp.

204

58286